Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Ինֆորմատիկայի (8 դասաժամ), 3-րդ դասարանի դասվար (18 դասաժամ), 4-րդ դասարանի դասվար (18 դասաժամ), Տղաների տեխնոլոգիայի 3 դասաժամ ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝սույն թվականի հոկտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերի:

Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 23-ին,**

1. 4-րդ դասարանի դասվարի մրցույթ -**ժամը 11:00-ին,**
2. 3-րդ դասարանի դասվարի մրցույթ - **ժամը 13:00-ին**
3. Ինֆորմատիկայի և տեխնոլոգիայի ուսուցչի մրցույթ - **ժամը 15:00-ին**

Մրցույթը տեղի կունենա Լոռու մարզի Լուսաղբյուրիի միջնակարգ դպրոցում:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (098)161433 հեռախոսահամարով:
Հասցեն՝ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լուսաղբյուրի 1 փողոց,շենք 21: